ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

28.12.2018թ.

Արձանագրություն հմ. 4

Միջազգային համագործակցության ներկա վիճակը և խնդիրները

Լսելով և քննարկելով միջազգային համագործակցության վերաբերյալ Արտաքին կապերի դեպարտամենտի պետ Գ. Համբարձումյանի զեկույցը՝ գիտական խորհուրդն արձանագրում է, որ միջազգային համագործակցության ոլորտում ՀԱԱՀ-ն հետևողականորեն ընդլայնում է իր կապերն ու ձևաչափերը:

ՀԱԱՀ-ն ներկայումս ունի շուրջ 105 կնքված համագործակցության համաձայնագրեր և հուշագրեր, որոնցից 13-ը կնքվել է 2018թ.-ին: Սակայն, այս համաձայնագրերի ոչ բոլորն են իրական կյանքի կոչվում: Այն ունի իր օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառները:

Համագործակցությունը հատկապես սերտ է եվրոպական տարբեր բուհերի հետ: 2017-2018 ուստարվա ընթացքում ՀԱԱՀ-ն ունեցել է 27 Էրազմուս+ ՀԳ1 ծրագրեր, որոնցից 21-ը՝ նոր, իսկ 6-ը՝ 2016-2017 ուստարվանից:

2018թ.-ի ընտրության արդյունքում ՀԱԱՀ-ն նախնական տվյալներով ունի 19 նոր Էրազմուս+ ՀԳ1 ծրագրեր (ևս 15-ը շարունակվում են անցյալ տարվանից): Ընդ որում, Էրազմուս+ ծրագրերի քանակով 2017 և 2018 թ.-ին ՀԱԱՀ-ն երկրորդն է ՀՀ բուհերի շարքում: Այս ծրագրի շրջանակներում 29 ուսանողներ և 38 դասախոսներ սովորել, դասավանդել կամ վերապատրաստվել են եվրոպական տարբեր բուհերում:

Ակտիվ աշխատանքներ են տարվում նաև 2 Էրազմուս+ ՀԳ2 ծրագրերով՝ TOPAS և ABioNet: TOPAS-ի միջոցով կբարելավվի ագրարային մենեջմենթ մագիստրոսական, ինչպես նաև ագրոէկոնոմիկա և սննդարդյունաբերության էկոնոմիկա բակալավրիատի կրթական ծրագրերը, մասնավորապես՝ պրակտիկաների անցկացման մեխանիզմը: ABioNet ծրագրի միջոցով կմշակվի և բուհում կներդրվի սննդի անվտանգության մագիստրոսական ծրագիրը, ինչը մեծ ձեռքբերում կլինի մեր բուհի համար:

ՀԱԱՀ-ն փորձում է ընդլայնել միջազգային համագործակցության ձևաչափը: Դրա ապացույցն է Եվրասիա կրթական ծրագրի ֆինանսավորմամբ 2017թ.-ից Նորվեգիայի Թրոմսոյի Արկտիկական համալսարանի, Նորվեգիայի Կենսաէկոնոմիկայի ինստիտուտի հետ համատեղ իրականացվող «Գյուղատնտեսական զարգացման համար Նորվեգիա-Հայաստան համագործակցության ծրագիր բույսերի մոլեկուլային կենսաբանության և կենսատեխնոլոգիայի բնագավառներում» ծրագիրը, Appear ծրագրի շրջանակներում Վիեննայի բնական ռեսուրսների համալսարանի (BOKU) օժանդակությամբ իրականացվող «Խթանել օրգանական գյուղատնտեսությունը Հայաստանում» ծրագիրը, ինչպես նաև NUFFIC-ի կողմից ֆինանսավորվող և Վախենինգենի համալսարանի համակարգմամբ իրականացվող «Կարողությունների զարգացում բույսերի նախաբուծման և գենետիկ ռեսուրսների մենեջմենթի ուղղությամբ՝ Հայաստանում կլիմայական փոփոխություններով պայմանավորված»:

2018թ.-ին 56 ուսանողներ և 83 դասախոսներ գործուղվել են արտերկիր, իսկ ՀԱԱՀ են ժամանել 24 դասախոսներ և գիտնականներ:

Հաշվի առնելով Գ. Համբարձումյանի զեկույցն ու բուհում միջազգայնացման ուղղությամբ առկա որոշ բացթողումները՝ գիտական խորհուրդը որոշում է.

1. Հանձնարարել ռեկտոր Վ. Ուռուտյանին՝ կազմակերպել աշխատակիցների վերապատրաստում միջազգային դրամաշնորհային ծրագրեր գրելու և կառավարելու ուղղությամբ,

2. Հանձնարարել Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ռ. Մակարյանին, դեկաններին՝ մշակել մեխանիզմ ուսանողների ակադեմիական տեղեկագրքում և դիպլոմի հավելվածում շարժունության ընթացքում հավաքված կրեդիտների գրանցման համար:

3. Հանձնարարել Որակի ապահովման և գնահատման կենտրոնի տնօրեն Մ.Մովսիսյանին՝ մշակել մեխանիզմ՝ աշխատակիցների շարժունության ճանաչման համար:

4. Հանձնարարել Արտաքին կապերի դեպարտամենտի պետ Գ. Համբարձումյանին՝ ավելացնել նոր ձևաչափերով միջազգային ծրագրերի քանակը՝ 20 %-ի չափով:

5. Հանձնարարել Հայոց և Օտար լեզուների ամբիոնին և Լեզվի ուսուցման կենտրոնին՝ բարձրացնել օտար լեզուների դասավանդման արդյունավետությունը և օտար լեզուների իմացությունը աշխատակիցների շրջանում:

6. Հանձնարարել դեկաններին, ամբիոնի վարիչներին, Արտաքին կապերի դեպարտամենտին՝ արտերկրում վերապատրաստված ուսանողների և, հատկապես, աշխատակիցների կողմից ձեռք բերած փորձը համալսարանում հրապարակայնացնելու, տեղայնացնելու ուղղությամբ:

Իրականացնել

- դրամաշնորհային ծրագրերի մշակում և նախաքննարկում,
- արտերկրի բուհերից ուսանողների շարժունության բարձրացում,
- տարբեր հարթակներում ՀԱԱՀ-ի ներկայացում պատշաճ մակարդակով:

Գիտական խորհրդի նախագահ՝ Վ. Ուռուտյան

Գիտական խորհրդի քարտուղար՝ Դ. Բալասանյան